Թրանսփարենսի Ինթերնեշնլի 2017թ. Կոռուպցիայի ընկալման համաթիվը

Հաճախակի տրվող հարցեր

Ի՞նչ է իրենից ներկայացնում Կոռուպցիայի ընկալման համաթիվը:

Թրանսփարենսի Ինթերնեշնլի (ԹԻ) Կոռուպցիայի ընկալման համաթիվը (ԿԸՀ) գնահատում և դասակարգում է պետությունները/տարածքները՝ ելնելով այն բանից, թե երկրի հանրային ոլորտը (պետական և համայնքային մարմիններ) որքանով է ընկալվում որպես կոռումպացված: Այն բաղադրյալ համաթիվ է, որը ստացվել է իրենց բնագավառներում ճանաչում ունեցող մի շարք կազմակերպությունների կողմից անցկացված 13 հարցումների և գնահատումների՝ կոռուպցիային առնչվող տվյալների համադրությամբ: ԿԸՀ-ն կոռուպցիայի վերաբերյալ աշխարհում ամենից լայնորեն գործածվող ցուցանիշն է:

Որո՞նք են ԿԸՀ հաշվարկման համար օգտագործված տվյալների աղբյուրները:

2017թ. ԿԸՀ-ն հիմնված է կառավարման և բիզնես մթնոլորտի վերլուծության ոլորտներում մասնագիտացած անկախ կազմակերպությունների տվյալների (աղբյուրների) վրա: 2017թ. ԿԸՀ-ի համար օգտագործված տեղեկատվության աղբյուրներն այն տվյալներն են, որոնք հավաքվել են անցած 2 տարիների ընթացքում: ԿԸՀ-ն ներառում է միայն այն աղբյուրները, որոնք դասակարգում են պետությունների/տարածքների խմբերը և չափում են փորձագետների՝ հանրային ոլորտում առկա կոռուպցիայի ընկալումը: Թրանսփարենսի Ինթերնեշնլը մանրամասն դիտարկել է տվյալների յուրաքանչյուր աղբյուրի մեթոդաբանությունը՝ ստուգելու համար օգտագործված աղբյուրների համապատասխանությունը Թրանսփարենսի Ինթերնեշնլի կողմից պահանջվող որակի չափանիշներին: Տվյալների աղբյուրների ամբողջական ցանկին ծանոթանալու համար տե՛ս *ԿԸՀ 2017թ.հաշվարկելու համար օգտագործված աղբյուրները* էջը:

Ինչո՞ւ համար է պետք ԿԸՀ-ն, եթե կան 13 տարբեր աղբյուրներ, որոնք չափում են կոռուպցիայի դրսևորումները հանրային ոլորտում:

Շնորհիվ իր չորս հատկանիշների՝ ԿԸՀ-ն դառնում է կառավարման արժեքավոր ցուցիչ:

1. ԿԸՀ-ն ծածկում է ավելի մեծ թվով երկրներ, քան այդ 13 աղբյուրներից որևէ մեկը:
2. ԿԸՀ-ն ավելի հուսալի աղբյուր է, քան ամեն մի առանձին աղբյուրի տվյալները, քանի որ այն, վերցնելով առնվազն 3, իսկ հնարավորության դեպքում բոլոր 13 աղբյուրների արժեքների

միջինը, չեզոքացնում է որևէ մեկ կամ մի քանի աղբյուրներում առկա հնարավոր սխալների ազդեցությունը:

3. ԿԸՀ-ն, իր 0-ից 100 սանդղակով, ավելի մանրամասն է իրարից տարանջատում տարբեր երկրների կոռուպցիայի ընկալման մակարդակները, քան ամեն մի առանձին վերցրած աղբյուր, որոնք կիրառում են, օրինակ, 1-ից 7 կամ 1-ից 10 սանդղակներ:
4. Քանի որ ԿԸՀ-ն հաշվարկելու համար օգտագործվող տարբեր աղբյուրները գնահատում են հանրային ոլորտում կոռուպցիայի տարբեր ասպեկտներ և դրսևորումներ, ապա, շնորհիվ դրա, ԿԸՀ-ն իր մեկ ցուցիչով ի մի է բերում այդ բոլոր ասպեկտները և դրսևորումները:

Ինչո՞ւ է ԿԸՀ-ն հիմնվում միայն ընկալման վրա:

Կոռուպցիան ընդհանրապես իր մեջ ներառում է անօրինական գործունեության տեսակներ, որոնք միտումնավոր թաքցվում են և բացահայտվում են միայն սկանդալների, հետաքննությունների կամ քրեական հետապնդումների միջոցով: Չնայած ակադեմիական ոլորտի հետազոտողները, քաղաքացիական հասարակությունը և կառավարությունները գրանցել են առաջընթաց առանձին ոլորտներում կոռուպցիան օբյեկտիվորեն չափելու առումով, սակայն այսօրվա դրությամբ չկա որևէ ցուցիչ, որն ուղղակիորեն և միանշանակ կերպով կարող էր չափել տարբեր պետություններում կամ տարածքներում առկա կոռուպցիայի օբյեկտիվ մակարդակը: ԿԸՀ հաշվարկելու համար օգտագործված աղբյուրներում և հարցումներում հարցվածներին տրվում են հարցեր, որոնք ներառված են ճշգրիտ կերպով մշակված և փորձարկված հարցաշարերում: ԿԸՀ-ն արտացոլում է համապատասխան շահառուների տեղեկացված կարծիքները, որոնք զգալի չափով կորելացված են այնպիսի օբյեկտիվ ցուցիչների հետ, ինչպիսին է շարքային քաղաքացիների կաշառատվության փորձը, որն արտացոլված է Կոռուպցիայի համաշխարհային բարոմետրում:

Ո՞ր պետությունները/տարածքներն են ընդգրկված 2017թ. Կոռուպցիայի ընկալման համաթվի (ԿԸՀ) դասակարգման աղյուսակում և ինչո՞ւ:

Որպեսզի պետությունը/տարածքը ընդգրկվի դասակարգման աղյուսակում՝ այն պետք է ներառված լինի ԿԸՀ տվյալների առնվազն երեք աղբյուրներում: Հետևաբար, համաթվի աղյուսակում տվյալ պետության ներառված չլինելը նշանակում է ոչ թե այն, որ այդ պետությունում առկա չէ կոռուպցիա, այլ միայն այն, որ նրա վերաբերյալ առկա չէ կոռուպցիայի վերաբերյալ բավարար տեղեկատվություն: Այս տարի ԿԸՀ դասակարգման աղյուսակում ներառված են 180 երկրներ և տարածքներ՝ 4-ով ավելի, քան 2016թ.: 2016թ. հետ համեմատած՝ ԿԸՀ 2017թ. դասակարգման աղյուսակում ավելացվել են Հասարակածային Գվինեան, Սեյշելյան կղզիները, Սվազիլենդը և Վանուատուն:

Ինչո՞ւմն է ԿԸՀ դասակարգման մեջ պետության/տարածքի զբաղեցրած տեղի և նրա ԿԸՀ արժեքի միջև տարբերությունը:

Պետության/տարածքի ԿԸՀ արժեքը ցույց է տալիս պետության հանրային ոլորտում կոռուպցիայի ընկալման մակարդակը 0-ից 100 սանդղակով, որտեղ 0-ն նշանակում է, որ պետությունն ընկալվում է որպես բացարձակապես կոռումպացված, իսկ 100-ը նշանակում է, որ պետությունն ընկալվում է որպես բացարձակապես մաքուր: Պետության զբաղեցրած տեղը ԿԸՀ դասակարգման աղյուսակում ցույց է տալիս նրա դիրքը դասակարգման մեջ ներառված պետությունների շարքում: Պետության զբաղեցրած տեղը ԿԸՀ դասակարգման աղյուսակում կարող է նաև պարզապես փոփոխվել՝ պայմանավորված այդ աղյուսակում ներառված պետությունների քանակի փոփոխությամբ:

Կոռուպցիայի ո՞ր դրսևորումներն են արտացոլված ԿԸՀ-ում:

Ելնելով տվյալների հավաքագրման համար տրված համապատասխան հարցերի ձևակերպումներից՝ ԿԸՀ հաշվարկման համար օգտագործված աղբյուրների տվյալները ներառում են կոռուպցիայի հետևյալ դրսևորումները.

- Կաշառակերություն
- Հանրային միջոցների մսխում
- Պետական պաշտոնից անպատիժ կերպով անձնական օգուտներ ստացող պաշտոնյաների լայն տարածվածություն
- Հանրային ոլորտում կոռուպցիան սահմանափակելու և բարեվարքության արդյունավետ մեխանիզմներ ներդնելու՝ իշխանությունների ունակություն
- Բյուրոկրատական քաշքշուկ և ավելորդ ընթացակարգեր, որոնք կարող են մեծացնել կոռուպցիոն դրսևորումների քանակը
- Հանրային ծառայությունում ըստ արժանիքների կամ «խնամի-ծանոթ-բարեկամ» սկզբունքի վրա հիմնված աշխատանքի ընդունում
- Կոռումպացված պաշտոնյաների արդյունավետ քրեական հետապնդում
- Պետական պաշտոնյաների գույքի և եկամուտի հայտարարագրմանը և շահերի բախման կանխարգելմանն ուղղված գործուն օրենքների առկայություն
- Ազդարարների, լրագրողների և քննիչների արդյունավետ իրավական պաշտպանություն, երբ նրանք բացահայտում են կաշառակերության և կոռուպցիայի դեպքեր
- Պետության զավթում նեղ անձնական շահերի կողմից
- Քաղաքացիական հասարակության համար պետական մարմինների գործունեության հետ կապված տեղեկատվության մատչելիություն

Կոռուպցիայի ո՞ր դրսևորումները չի արտացոլում ԿԸՀ-ն:

ԿԸՀ աղբյուրների տվյալները չեն արտացոլում կոռուպցիայի հետևյալ դրսևորումները.

- Շարքային քաղաքացիների կողմից կոռուպցիայի ընկալում կամ փորձ
- Հարկային ոլորտում օրինախախտումներ
- Ապօրինի ֆինանսական հոսքեր

- Կոռուպցիոն գործարքներում ներքաշված անձինք (փաստաբաններ, հաշվապահներ, ֆինանսական խորհրդականներ և այլն)
- Փողերի լվացում
- Մասնավոր հատվածում կոռուպցիա
- Ստվերային տնտեսություն և շուկաներ

ԿԸՀ ամենացածր արժեք ունեցող պետությունը/տարածքը հանդիսանո՞ւմ է արդյոք աշխարհի ամենակոռումպացված պետությունը:

Ոչ: ԿԸՀ-ն հանրային հատվածի կոռուպցիայի՝ այսինքն վարչական և քաղաքական կոռուպցիայի ընկալման ցուցանիշ է: Այն չի հանդիսանում մի ողջ պետության կամ հասարակության կոռումպացվածության և այդ պետության արտաքին քաղաքականության կամ գործունեության և կամ մասնավոր հատվածի գործունեության վերաբերյալ դատավճիռ: ԿԸՀ դասակարգման ստորին հորիզոնականներում գտնվող պետությունների քաղաքացիները հաճախ նույնքան մտահոգ են և ունեն նույնքան քննադատական մոտեցում կոռուպցիայի նկատմամբ, ինչպես վերին հորիզոնականներում գտնվող պետությունների/տարածքների հասարակությունները:

Բացի այդ, ԿԸՀ ամենացածր արժեք ունեցող պետությունը/տարածքը այն պետությունը/տարածքն է, որում հանրային ոլորտում կոռուպցիայի մակարդակն ընկալվում է ամենաբարձրը *ԿԸՀ աղյուսակում ընդգրկված պետությունների/տարածքների շարքում:* ԿԸՀ-ն ոչ մի տեղեկություն չի տալիս այն պետությունների/տարածքների վերաբերյալ, որոնք ընդգրկված չեն այդ համաթվի աղյուսակում:

Կարելի՞ է, արդյոք, տվյալ երկրի 2017թ. ԿԸՀ արժեքը համեմատել նրա նախորդ տարվա արժեքի հետ:

Այո: 2012թ. ԿԸՀ հաշվարկելու մեթոդաբանության վերանայման հետևանքով փոխվեց նաև ԿԸՀ արժեքների սանդղակը, և այն այժմ 0-ից 100 է: Յուրաքանչյուր երկրի համաթվի արժեքը, որը հաշվարկված է՝ հիմնվելով տվյալների համապատասխան աղբյուրների վրա, համապատասխանեցվում է ԿԸՀ սանդղակի հետ՝ վերցնելով 2012թ., որպես հաշվանքի մեկնարկային տարվա, ԿԸՀ գլոբալ միջինը և ստանդարտ շեղումը: Կիրառելով այս նոր սանդղակը՝ հնարավոր է դառնում համեմատել ԿԸՀ տվյալ տարվա արժեքները նրա նախորդ և հաջորդ տարիների արժեքների հետ: Սակայն քանի որ 2012թ. փոխվեց ԿԸՀ հաշվարկման մեթոդաբանությունը, ԿԸՀ մինչև այդ տարեթվի արժեքները չի կարելի համեմատել հաջորդ տարիների արժեքների հետ: Բացի այդ, 2016թ. նոր աղբյուրի ավելացման հետևանքով մյուս աղբյուրների նախորդ տարիների (2012-2015թթ.) տվյալները համեմատելի չեն այդ աղբյուրների 2016թ. տվյալների հետ:

2012-ից փոխված մեթոդաբանության ավելի մանրամասն նկարագրությունն առկա է այստեղ՝ **Կոռուպցիայի ընկալման համաթիվ՝ 2012թ. թարմացված մեթոդաբանություն**

Որտե՞ղ կարող եմ գտնել տվյալների ամբողջական աղյուսակները ժամանակային շարքերի տեսքով:

Դա դուք կարող եք Թրանսփարենսի Ինթերնեշնլի կայքում:

Ցանկանում եմ ներկայացնել ԿԸՀ տվյալներն իմ հրապարակումներում: Պետք է, արդյո՞ք, դրա համար խնդրեմ թույլտվություն:

Ոչ: Եթե այլ բան չի նշվում, ապա Թրանսփարենսի Ինթերնեշնլի բովանդակությունը կարգավորվում է *Creative Commons Attribution-No Derives 4.0* լիցենզիայով: Դա նշանակում է, որ դուք ազատ եք օգտագործելու մեր տվյալներն առանց մեզ հետ դա համաձայնեցնելու, եթե դուք համաձայն եք նշված լիցենզիայի պայմանների հետ:

Կարո՞ղ եմ, արդյոք, համեմատություններ անել մինչև 2012թ. ԿԸՀ արդյունքների հետ:

Ոչ, քանի որ 2012թ. մեր մեթոդաբանությունը փոփոխության ենթարկվեց, և այդ տարվանից առաջ եղած արդյունքները չեն կարող համեմատվել հետագա տարիների արդյունքների հետ: Միայն 2012թ.-ից հետո ստացված արդյունքներն են իրար հետ համեմատելի:

Կարելի՞ է, արդյոք, համեմատել իրար հետ երկրներ, որոնք ԿԸՀ արժեքները հաշվարկվել են՝ օգտագործելով տարբեր աղբյուրներ:

Այո: Կիրառելով մեր վերամասշտաբավորման գործողությունը՝ մեր բոլոր աղբյուրների տվյալների արժեքներն ավելի մոտ են բերվում գլոբալ միջինին և ստանդարտ շեղմանը, որոնց հաշվարկի մեկնակետը 2012 թվականն է: Դա հնարավորություն է տալիս իրականացնել ժամանակային համեմատություններ:

Իմ երկրի ԿԸՀ արժեքը փոխվել է մեկ-երկու կետով: Արդյո՞ք դա նշանակում է, որ կոռուպցիան ավելացել կամ նվազել է:

ԿԸՀ-ն բաղադրյալ ցուցիչ է, որը հաշվարկելու համար անհրաժեշտ է առնվազն երեք աղբյուր յուրաքանչյուր երկրի համար: Որոշ երկրների համար աղբյուրները տալիս են իրար մոտ արժեքներ, իսկ որոշ այլ երկրների դեպքում տարբեր աղբյուրների արժեքներն ավելի շատ են իրարից տարբերվում: Այս տարբերությունները ներկայացնելու համար ԿԸՀ արժեքի հետ մեկտեղ ներկայացվում են նաև ստանդարտ շեղումը և վստահելիության միջակայքերի վերին և ներքին սահմանները: Այն երկրների ԿԸՀ արժեքները, որոնց հաշվարկի համար օգտագործված աղբյուրների արժեքներն իրար մոտ են, կունենան ավելի փոքր ստանդարտ շեղում, քան այն երկրների ԿԸՀ արժեքները, որոնց հաշվարկի համար օգտագործված աղբյուրների արժեքներն իրարից շատ են տարբերվում: Քիչ հավանական է, որ ԿԸՀ արժեքի փոփոխությունը մեկ կամ երկու միավորով լինի վիճակագրորեն նշանակալի: Վիճակագրորեն նշանակալի փոփոխությունները բերված են մեր տվյալների Excel ֆորմատով աղյուսակներում. տե՛ս «Նշանակալի փոփոխություններ» վերնագրով աղյուսակը:

Արտացոլո՞ւմ է, արդյոք, ԿԸՀ-ն տվյալ երկրում տիրող կոռուպցիայի ամբողջական պատկերը:

Ոչ: ԿԸՀ-ն սահմանափակված է որոշակի շրջանակով՝ կոռուպցիան ներկայացնելով հանրային հատվածում գործարարների և երկրի փորձագետների տեսանկյունից: Այս մոտեցումը լրացնելու և կոռուպցիայի տարբեր ասպեկտներ ներկայացնելու համար Թրանսփարենսի Ինթերնեշնլի

Քարտուղարությունը և աշխարհի ավելի քան 100 երկրներում գտնվող նրա ազգային ներկայացուցչությունների ցանցը իրականացնում են կոռուպցիայի վերաբերյալ որակական և քանակական հետազոտություններ և ուսումնասիրություններ, որոնք տալիս են կոռուպցիայի չափի, տարածվածության և դինամիկայի համապարփակ պատկերը ողջ աշխարհում:

Բացի Կոռուպցիայի ընկալման համաթվից՝ ԹԻ-ի համաշխարհային հետազոտության փաթեթում ներառված են նաև.

* **Կոռուպցիայի համաշխարհային բարոմետր (ԿՀԲ)**

Կոռուպցիայի համաշխարհային բարոմետրը ներկայացուցչական հարցման միջոցով չափում է մարդկանց՝ կոռուպցիայի ընկալումն ու փորձը: Թրանսփարենսի Ինթերնեշնլի վերջերս հրապարակված Եվրոպայի և Միջին Ասիայի զեկույցը կարող եք գտնել https://www.transparency.org/whatwedo/publication/7493 հասցեում:

Կոռուպցիայի համաշխարհային բարոմետրի վերաբերյալ վերջին տվյալները կարելի գտնել այստեղ:

* **Կոռուպցիայի համաշխարհային զեկույց (ԿՀԶ)**

Կոռուպցիայի համաշխարհային զեկույցը թեմատիկ զեկույց է, որն ուսումնասիրում է կոռուպցիան առանձին ոլորտում կամ հատվածում: Այն հիմնված է փորձագիտական ուսումնասիրությունների և վերլուծությունների, ինչպես նաև առանձին դեպքերի ուսումնասիրությունների վրա: Կոռուպցիայի համաշխարհային վերջին զեկույցը կարելի է գտնել http://www.transparency.org/research/gcr հասցեում:

***Օրինավորության ազգային համակարգի (ՕԱՀ) գնահատում**

Օրինավորության ազգային համակարգի (ՕԱՀ) գնահատումը տվյալ պետության վերաբերյալ կատարվող ուսումնասիրությունների շարք է, որը տալիս է այդ պետության արդյունավետ կառավարում և օրինականություն ապահովող առանցքային հաստատությունների (ի թիվս այլ հաստատությունների՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանություններ և հակակոռուպցիոն մարմիններ) ուժեղ և թույլ կողմերը: Զեկույցների ողջ ցանկին ծանոթանալու և Օրինավորության ազգային համակարգի մոդելի մասին ավելի շատ տեղեկատվության համար տե՛ս http://www.transparency.org/whatwedo/nis հղումը:

***Թափանցիկությունը կորպորատիվ հաշվետվություններում (TRAC)**

Սույն ուսումնասիրությունը վերլուծում է, թե աշխարհի ամենամեծ ընկերությունները որքանով են թափանցիկ զեկուցում իրենց կողմից հակակոռուպցիոն միջոցառումների իրականացման վերաբերյալ: Հետագա տեղեկությունների համար տե՛ս http://www.transparency.org/whatwedo/publication/transparency_in_corporate_reporting_assessing_the_worlds_largest_companies_2014 հղումը: